— Ինչու չգրել, պատոելի պարոն, — պատասխանեց նա զարմացած կերպով:

— Նրա համար, որ այդ ամանով դուք մեզ ջուր տոեցիք, մենք ջուրը գործածեցինք, եթէ ջուրը մի առանձին արժէք ունի, կը տանք, բայց ամանը այստեղ պէտք է թողնենք ու գնանք:

— Ինչո՞ւ էք թողնում, պատոելի պարոն, կարող էք ամանն էլ ձեզ հետ տանել, չէ՞ որ ձեզ համար է գնուած:

Անպիտանը հաւաստի էր, որ մենք այն մեծ խեցեղէն կուժը մեզ հետ չէինք տանի, այդ պատճառով այսպիսի առաջարկութիւն էր անում, որ մեզ դժուարութեան մէջ դնէ:

— Դուք ձեր բոլոր այցելուների հետ այդպէ՞ս էք վարւում, — հարցրի նրանից:

— Դուք գիտէք, պատոելի պարոն, որ մենք սուտ խօսելու սովորութիւն չունենք, — կրկնեց նա հայ-բողոքականի սովորական պարծենկոտութեամբ:

Ես վճարեցի բոլորը, ինչ որ նրա թղթի վրայ գրած էր: Բայց այդ միջոցին իմ մէջ խաղաց իմ մանկական չարութիւններից մէկը:

— Ուրեմն այդ կուժը այժմ մեզ է պատկանում: Այսպէս չէ՞:

— Ի հարկէ, ձեզ է պատկանում, սիրելի եղբայր... — ասաց նա, բայց յետոյ ուշի գալով, որ հային «եղբայր» ասելը մեղք է, իսկոյն ուղղեց իր սխալը.

— Ի հարկէ, ձեզ է պատկանում, պատոելի պարոն: Կարող էք ձեզ հետ տանել:

— Ես նրան կը թողնեմ այստեղ:

Ժլատի դէմքը փայլեց: Բայց ես կուժը զարկեցի սենեակի քարէ յատակի վրայ, փշրոեցաւ: Հաջին ամբողջ մարմնով սոսկաց: Կարծես, կուժը նրա գլխին կոտրեցին: Նա երեւակայել անգամ չէր կարող, որ իր առաջարկութիւնն այդպիսի հետեւանք կունենար: Երկար, սառածի նման, նայում էր խեցիների կտորների վրայ, որոնք կարծես իւր սրտի կտորները լինէին: Այդ միջոցին ներս մտաւ Ասլանը եւ հասկանալով եղելութիւնը՝ յանդիմանեց ինձ.

— Այդ ի՞նչ երեխայութիւն է:

Հաջիի լեզուն բացոեցաւ: Նա իրան պաշտպան գտաւ:

— Այդ ասացէք, պարոն բժշկապետ, ի հարկէ, երեխայութիւն է, ապա ինչ է, — մրթմրթաց նա խորին դժգոհութեամբ:

Ասլանը նայեց նրա ներկայացրած հաշոի վրայ եւ, ձեռքը մեկնելով դէպի նա, ասաց.